

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ԲՆՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՑԻՉ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

(Շար. տես Բազմ. 1927, էջ 244)

Ա. — Այժմ անոնք որ ի մանկութենէ ուսած են Հին ազգերու պատմութիւնն և տեղեակ են անոնց գեղեցիկ դարութեանց և արուեստից, նա մանաւանդ անոնք որ կուտումով պարապած են անոնց ուսումնասիրութեամբ և խանդավառուած են Յոյն և Հռոմէական գեղարուեստով, և Հիպոկրէն, այսպէս ասած, Նոր Բիւզանդական ճարտարապետութեան, մեծապէս կը խորեն և կը դժուարին հաւատալ և ընդունիլ որ գրեթէ անծանօթ և ասիական փոքր ժողովուրդ, Հայ ազգը, որ անցելոյն մէջ չլացուցիլ փայլ մ'ունեցած չէ, ոչ գեղեցիկ դարութեանց և ոչ արուեստից մէջ, յանկարծ ստեղծագործող մը հանդիսանայ ճարտարապետական այնպիսի ՆՈՐ ՈՃՈՑ մը, որ իւր գեղեցկութեան և փնտմութեամբ գերազանցէ բոլոր Հին աշխարհի ճարտարապետական կարգերը, և անցնի նստի իբր թագունչի Քիդարուեստի Տաճարին մէջ, փառքի զօրութեան անուշովս ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ:

Եւրոպացի մանապէս ճարտարապետներ երբէք պիտի չզարմանան այն Հայ հանճարի ստեղծագործ նորութեան մասին, եթէ մտածեն որ Ե զարու սկիզբն յանկարծակի, յեղակարծուտ երկու Հայու հանճարով Հայ յաստան կերպարանափոխ կը լինի. յոյնէն ուրա կը ստեղծեն գիր, ազգային լեզու, գրականութիւն, ան միանգամայն Հայու Ոսկեդարն է՝ Այս երևոյթը Հինգերորդ դարէն մինչև ցայսօր ոչ մի ազգի մէջ չէ եղած, որոնք Հռոմէական կայսերութեան քնկումէն յետոյ յառաջ եկան, և այժմ կը կազմեն Եւրոպայի ամենազարգացեալ ազգերն Դոկու. Բ. Մարկուսարտ դիւանական համեմատելով իւրեանցայնոյն Հետ, Սաւաւայ և Մետրոպալ գործը կատարեալ և գերազանց կը դասէ. Թողունք մի ինքը խօսի. «Միտոց ու Սահակ իրենց մտքի գործունէութեամբը եկեղեցական ու ժողովրդական ինքնագիտակցութեան զարթոյնցին Հայ ազ-

գը, և այդ գործին Հետ համեմատութեան դնենք Դանայեան պարզէր, զոր փրանկ Պեպինոս քաղաքական ու եկեղեցական ամէն միջոց լիապէս ի ձեռին ունենալով նուիրեց գերման ժողովրդեան, այն ատեն թէ՛ Պեպինոս և թէ՛ իւր զինակիրը Վինֆրիդ՝ խեղճ թզուկներ կ'երեւան համեմատութեամբ մտքի այն հսկաններուն: Ժողովուրդ մը, որ իւր ծոցէն այնպիսի մարդիկ ծնած է և զանոնք իբրև իւր դիւցազները կը յարգէ, որչափ թէ անոնք օրինակին Հետեի, անկարելի է որ իսպառիսպուռ ընլուի՝ որչափ ալ թուրք թաթար... ու բոլոր մեծ պետութիւններն Հակառակ ըլլան անոր»։ Եւ այն որքին և հանճարն, նոյն իսկ գրեթէ միաժամանակեղ դարու վերջերին, կը յլանայ և կը ծնի քրիստոնէական ճարտարապետութեան հրաշալիքը:

Բ. — Ո՛վ, էրբ, ուստի է Հայկական ճարտարապետութեան ծագումն: Այս հարցերուն արդէն մասնագէտ և արուեստագէտ ճարտարապետներ, անցեալ գեղարուեստի պատմութեան լուսով խոյզ և խնդիր առնելով ձգնուծ են Հուստոսիլ այն օտար աղբիւրներն, յորոց իբր թէ օգտուել է Հայ քարագործը: Արդ Հետև շատ կարևոր հարց մ'է և կուտախնձորն փոքրիկ ազգ մ'է, թէ և վկայուած Հինէն և նորէն արեւմտեան քաղաքակրթութեան և զարգացման յառաջամարտին հանդիսացած՝ յառաջագործ Ասիոյ մէջ, ոմանք հաւատարմով և համակրութեամբ, ոմանք անհանդուրժող ոգևորութեամբ և սակաւ մի մոլի ազգասիրութեան նախանձով լեցուն, թեր և դէմ պայքարում են առաջնութեան մասին Հայուն թէ՛ Ասորւոյն և կամ թէ Պարսկին:

Առ այժմ մեր ջանքն է, համեստ դիտողի պարտականութեամբ ցոյց տալ որ մարդիկ չեն եղած կամարապսակ բոլորաշէն գմբէթի ներշնչողն, և ոչ օտարազգի ուսուցիչներ ներածեր են զայն Հայաստանի սահմաններէն ներս. նոյն իսկ եթէ աստանդական (sporadique) հետքեր գտնուին Հայ հողի

1. «Քարբարիկ լեզունքու» ճարտ. յատուկ ազգաբնութիւն յետ — քրիստոնէական ստեղծագործութեան մէջ ապահովալէ ԱՄԵՐԱՅԱՐԱՐԱՆԻՆ է Հայ Գրի զեւորը:

Հանգ Ամս. Իի Կորի 1911. էջ 532. — Դոկու. Յով. Մարկուսարտ:

2. Հանգ. Ամս Իի Տարի 1911. էջ 538.

վրայ, բայց օտար լինելուն՝ արմատ չեն տուել և զարգացել: Մեր տկար տեսութեամբ նոյն ինքն բնութիւնն եղած է վարդապետ, ուսուցիչ և ներշնչողն քրիստոնեայ Հայու խանդակաթ հոգւոյն, և կրօնա-քաղաքական պարագաներ փութացուցին առաւել ի դարուն՝ ներշնչած գաղափարներն, իրական և շոշափելի նկարագրով դնել հաւատացեալ ժողովուրդի աչքին ի տես:

Եւ պէտք է ասել որ ոչ միայն Հայուն, նոյն Մար բնութիւնն եղած է ի սկզբանէն ուսուցիչ նաև ամէն ազգերուն, որովք այլ և այլ կարողութեամբ գիտացել են աւելի կամ պակաս ըմբռնել և թափանցել հրաշալեաց գաղտնիքին, և նախատիպ գաղափարի ձամբման դնել պատկերը իրականութեան մէջ: Հին Եգիպտական կամ Հելլէն արուեստաւորն յափշտակուած է երևելի աշխարհիս գեղեցկութեամբ, և բնութեան օրինակութիւնն հասուցած են խելքէ մտքէ վեր կատարելութեան: Պերիկլեան դարը սաշմանը դրաւ Վեդեցկին. անոր մօտեցողներ եղան, բայց դեռ անցնող մը եղած չէ: Պարթևներն հրաշակերտ մեհեանն, իւր տափակ ծածքով և լուսանցքով, ճարտարապետութեան և շքեղի ասած վերջին խօսքն է. սակայն նորա բարձրութիւնն Ոլիմպոսի կատարէն այն դէմը չ'անցնիր:

Քրիստոնէական յայտնութեան վիճակուած էր՝ երևելի աշխարհէն թեւակոխել յանրեւոյթն, մարդկային հասկացողութեան մէջ ներթափել նոր գաղափարներ իմանալի գեղեցկութեան զգացումն տիեզերքի ներգաշխուկութեան մէջ փնտռել. երևելի աստղերէն վեր դնել Նախախնամութեան աթոռն, ուսկից կը ճառագայթէ անոր մշտնջենաւորութիւնն, զօրութիւնն և աստուածութիւնն: Եւ Հայուն՝ իւր յերմեանդադոյն հաւատքովն յայտնի եղած Պարսից փոթորկալից հալածանքի ժամանակ, պարզութենէն յետոյ յաղթանակով հրճուող բնութիւնն ներշնչեց երկանիկ գաղափարն ձեռագործ արուեստով կերպարանել իւր հաւատալեաց առարկան, կեդրոնացնել խտացնել կրօնքի խորհուրդներն, հաւատքի հանգանակն, իւր ձեռակերտ գմբեթաւոր տաճարի մէջ:

Հեթանոսներն ունէին յատուկ պատուիրաններ և օրէնք կառուցանելու ըստ իրաքանչիւր աստուածութեանց ինքնուրոյն շինուածքով մեհեաններ: Մեծ կոչուած աս-

տուածներուն նուիրուած հոյակապ տաճարները, նման չէին փոքր կոչուածներուն, յորս ի նկատի ունէին նաև իզական և արական աստուածներու զանազանութիւնն: Առտի բնական է որ քրիստոնեայ աշխարհն իսկ՝ իւր հոգեղութեան առաջին առարկան արած լինի կառուցանել իւր Աստուծոյ տունը համապատասխան իւր հաւատոյ դաւանութեան, իւր կրօնքի համոզմանը, որ ճշմարտութիւնն ինքնին գոյով, գերազանց և յաւիտենական, խորհրդական անշնչութիւն մը պիտի ունենար անոր հետ: Եւ բաւական պիտի լիներ ասեմն քրիստոնէական ճարտարապետարհան, հասկանալու համար որ Մովսիսական տափառակներու պէն կը պարտնակէ իւր մէջ Աւետարանը: Սիրոյ նոր պատուիրանն:

Այո, անշափս յարգելով գիտնականների և արուեստի վարդապետներու արտաքին հետազոտութիւններն և անոնց հանած հետեւութիւններն, յայտնած զանազան թուրք և կարծիքներն, այնու հանդերձ սրբազան արուեստի ներքին գաղտնիքն և գիւտը պարզելու համար հարկ է միշտ դիմել ճշդիւ բնութեան և աստղածմուկ լուսաշող կամ մարի ներշնչմանը, առ որ ամէն վարպետ աչք կ'ամբառնայ անհուն սիրով, իբր միակ աղբիւր ամէն վսեմ և գեղեցիկ գաղափարի և իմաստի:

Գ. — Արդարև բնութիւնն բանականութենէ զուրկ ամէն արարածներուն, բուսական և կենդանական աշխարհի, ստուած է սեփական քնազգ մը, ճարտարութիւն, խելացիութիւն մը հանճարելու կեանքը և պահպանելու անձնիւր գոյութիւնն: Բնութեան հրաշալեաց նրբագին նկարագրութիւն մը սիրուած է Ս. Բարսեղի «Վեցօրեան» կուսնագործ գրքի էջերուն մէջ: Զոր օրինակ թէ ինչպէս մտածուած կերպով տկար ցօղուն ունեցող բոյսեր, ոճի երկարելուն հետ մէջ ընդ մէջ ծունկեր կը կապեն հաստատութեան համար, փիլոնի մէջ կ'ամփոփեն տունկի արնուազոյն մասն՝ որ ծաղիկ պիտի տայ և սերմի երթայ: Իսկ կենդանական աշխարհին ստուած է հիւանդի ճարտարաբուսութեամբ. չորքոտանեաց՝ կերտելու շինելու քնակարոններ, թռչնոց՝ կարելու, մածուցելու տրեւելուն, շիղդեր՝ բոյն ու քնակարան պատրաստելու փոքրիկներին: Միջատներու բանելու արուեստն արհեստան չէ. ո՛վ սորվեցուց սարգին հիւսել կազմել իւր ոստայնը,

1. Բնեղիկեան Աբրայ իւլ. Դուստր խօսելով վերածննդի ժամանակի եկեղեցիների մասին, ասում է որ ճարտարապետական հոխապածոյճ արտայայտութիւնն կեկեղեցիների մէջ, մեծագոյն ճիւղն է արուեստին

բարձրանալու մինչև գերազոյնը, և ներթափանդ հասկացնել տալ անմահ և աստուածայինը: (Շրջաբերական թուրք իւր թմին — Ս. Պոլոս արտաքայ Պարբսպին, հոսմ):

մտածուած Հայուով և ճարտարապետական չափ ու ձևով. ո՞վ թելադրեց ծիծեռնակին իւր երկնիդ տոտկներով, իշխաններու պերճ ապարանքներու յարկի տակ՝ կերտելու հաստատուն ժառանգական պատարարան մը իւր որդւոց. ո՞վ բոտորերանգ թռչնոյն (Bamant) խնդ զրաւ զլուին (ինքն Ոսիրիս) երկար բարակ ոտքերուն յարմար շինել կոպտանձն բարձր բոյնը թխելու համար, Հայա խելացի լըշան կատարիալ արուեստով իրի երեսին, ցցերի վերայ, գմբեքառոր տաղաւարների կերտուան: Ո՞վ չէ գարմացել Ողոմոն իմաստունի հետ ժիր մըլիհներու և տնօրէն մեղուներու իմաստութեան վերայ. ընտանեկան, շինարարական և քաղաքական կեանքով՝ գուցէ գերազանցեւ ըստ տեսակի, շատ մը մարդկային ցեղերի Ղկառնեք միայն մեղուի երկրայտական արուեստի Հնարիմացութիւնն և էշգութիւնն, ճարտարապետական կերտուածքի գաղտնիք՝ համակշիռքի (statique) հաշիւը, որով ստորին բլիշներու եռանկեան վրայ կը շինէ վերի բլիշն, որպէս զի մեղրի ծանրութիւնն չպատահէ յատակի թաղանթն: Նառ ճարտարապետներու տեսութենէն վրիպելով կարեւոր այդ հաշիւը, նոր շինութեանց փայտեայ կազմածն վերցնելով, իսկոյն չոգեր է շինութիւնն!

Եթէ չորքտանիք, թռչունք և միջատներ այսչափ կը փայլին իրենց քնազդով, որչափ աւելի նախապատմական մարդն, որ քնազդի հետ ի կիր արկած է բանականութիւնն օգտուելու բնութենէն և իշխանցներու իւր վիճակը, որու պէտքը զգում է իւր իսկ բնութիւնն, որով անհամեմատ գերազանց նուաճումներ պէտք է արած լինի բնութենէն նախորդին իւր երեման օրէն երկրիս վերայ: Նա ոչ թռչնոց պէս կարէ երկրէ երկիր շուշ զիւրութեամբ և ոչ անասուններու պէս բուսականանալ օդակառոյց և գետնափոր որջով, և դարբեր աւ դարբեր քարացած քնալ նոյն սկզբնական վիճակի մէջ. մինչ տիրական բնութեան կարիքն ստիպած է զմարդն ըստ տեղւոյ և ըստ կլիմայի ստեղծել յարմար բնակարան և պայտապանութիւն տարերայ խտութեան դժմութէ ամառն և թէ ձմեռն: Ուստի նախապատմական մարդն քարայրէն դուրս ելելով, բնական է վրանի տակ, առնկը տիպար վերցնելով, ցից մը մէջ տեղ տնկելով և խոտէ մանած կեմբէ՝ կոպտանձն բնեւելով գետին և վրան ծածկելով իւր անուցած ոչխարի մօրթով. առաջին տաղաւարն է որի տակ հանգչեցաւ Յովբէլ, զոր Արիական ցեղի նախաւայր մարթ է կոչել, զի Եննդոց գրոց մէջ նրա մասին ասում է.

«Նա է հայր այնոցիկ որ քնակեալ են ի վրանս խաշնարածաց»¹. Խոյն նշանն էր հոգւական ցեղի ինչպէս ցուէ Տուբանեան երկրագործին Նա իւր եղբարց և թոռանց հետ եղաւ առաջին գոյի տնական և պիտանի արուեստներուն. և անոնց քոյրն Նոյիմայ, նոյնքան ճարտար գտնուեցաւ ոստայնանակութեան մէջ: Նրա թափանցող աչքերէն վրիպած չէ անշուշտ իւր հիւղին շուք անող ծառի վրայ թռչնիկի կարած տեղի մէջ գետեղուած բոյնը, կամ արմաւենւոյն բունը պատող հիւսկին ցանցը որ ճարտար գործուած պատահաւ մը կը թուի: Նոյնմայ, անոնց հետեղութեամբ մանած, հիւսած և կարած է իւր հարսանեկան թեզանաւոր տաղիին պատմուճանը: Ո՞վ արդ կարէ ժխտել թէ արդարեւ բնութիւնն ինքեան չէ առուցեր իմաստութիւն և արուեստ:

Այսպէս նախապատմական ժամանակէն Արիական տերունդներէն, Հայ ցեղը, որ բնակուել է Հայաստանի մէջ, ենթարկուելով կլիմայի և աշխարհագրական բնական կազմութեան, որ լի է կազմակերպական հակադրութեամբ, և լի տարերային երևոյթներու հակապատկերներով, բաժանուած ձուրերով, որոց միջէն կ'ընթանան կարկաչուն գետեր, շուրջ բոլորած բարձրաբերձ լեռներով, որոց միջէն իբրեւ ծեր ոռն, կ'ասէ խորնացին, կ'ամբաստայ վաճմ հասակովն Մասիսն և արծաթափայլ հակառուին, բնակչիներու սրտին վրայ պիտի ազդէր սիրելու այդ երկրին, մտքին վրայ պիտի ներգործէր հոկաներու նմանութեամբ կերտել իւր տաղաւարիկն, այն ոճով որ լուրն և ձիւնն չկայնէին լճանային տանիքի վերայ, ահա մնած է վրանի, խորանի գաղափարն, աւակից անցիւր են փայտաշէն գմբեքառոր տանը շինութեան սիւններու վերայ, ազդուելով քարայրներու շրջաքարերէն, որ արգարե երբեք կատարիալ սիւներու կը նմանին: Ուստի բնութիւնն է որ կը քարթուցանէ բնազդով մարին մէջ հոգով ծածկել իւր ապաստանարանը, զոր յետոյ բանական նութեան օժանդակութեամբ պիտի վերածէ արուեստով քարուկիր տաճարներու՝ խորանաձն յարկով: Պէտք է խոստովանել որ Արարատ կամ Մասիքն, իւր եզական ձևով և զիրքով ամեն ժամանակ ունեցեր է իւր բարերար ազդեցութիւնն Հայաստանի հոգեկան և մտաւոր-քաղաքական և շինարարական կեանքի վերայ. աստուածակերտ Նաթողիկէն իւր արաստոյ քարերէն աստ

1. Եննդ. զ. Գ. 20.

ուրեմն պիտի ընծայէ իւրեան հաւասարը շինելու Գրիգորի և Տրդատի ձեռքով՝ ԼԶՔ ՄԻԱՏՆԻ տեղւոյն վերայ։

Ի. — Արուեստը՝ արդիւնք է կամ բնագ-
դի կամ փորձառութեան. բնագոյով եղած
գործ մը չի յառաջադիմեր, եթէ զուրկ է բա-
նականութենէն. իսկ փորձառութիւնն աղբիւր
է յառաջադիմութեան և զարգացման։ Մարդ
չատ անգամ գիպուածէն օգտուելով, ան-
գրադառնալով, կարողութիւն մը զոր չու-
նին անասունները, գիւտեր արած է որոնք
կերպարանափոխել են մարդկային ընկերու-
թիւնը։ Ուստի զարմանք չէ, եթէ մենք
համարձակենք ասել որ Հայն նախ բնարգոյով
մը ձգտել է դէպ ի գործիթաւոր շինութիւնն,
առ որ անգրադառնուցեր և ստիպեր են
կերպով մը բնութեան պարագաները։ Կա-
րող էին նոյն պարագաներն ազդել մի ու-
րիշ ցեղի վերայ ալ, սակայն եթէ անգրա-
դառնութեան կարողութիւնն ալ հաւասար
իկնէր երկու ազգի մօտ։ Հազարաւոր մար-
դիկ ջրի մէջ լողացեր էին, սակայն բնարմից
տեսակարար կշիռքի անգրադառնութիւնն՝
միայն Արքիմեդեսի հանճարին կը պատ-
կանի։ Հարիւրաւոր ճարտարապետներ եղած
են յորոց մին է նաև Լիփտոսի հռչակաւոր
Տաճարի շինողն՝ որու անունը չի յիշուիր,
աշխարհիս եօթը հրաշալեաց մին. այսպէս
անշատ աների վերայ կամարակապ գմբէթն
կը պատկանէ Հայաստանի Իւ-Պ դարու հա-
մեան Քարագործի մը, որու անունը ևս
անյիշատակ մնացեր է։

Բայց Լիփտոսի հրաշակերտ Տաճարն ու-
նեցել է իւր խոնձարուրքը նախապատմա-
կան ժամանակներում, Եգիպտոս, Կիպրոս,
Լիբտո՝ կամ Միկէնք, ուր թագաւորական
արքանիքի պեղումներու միջէն նախատիպար
մը յունական տաճարին կամ քաղիլիպոյին
յայտնուեցաւ Մենկարոն այգորելի դաշիճը,
որոյ նկարագրութիւնը կարելի է գտնել Հո-
մերի Ոգիականի մէջ՝ 1. Հայաստանի ու-
սումնասիրուած չէ, գիտական պեղումներ
տեղի ունեցած չեն։ Ուրարտական չրլանի
պեղումներն կը պարսինք Գերման գիտնա-
կաններին, որոնք կարծուածէն աւելի լոյս
սփռեցին Մեկարոնին գրեթէ ժամանակա-
կէց Հայաստանի քաղաքակրթութեան վե-
րայ։ Ինչ որ կը վերաբերի մեհհնական շի-
նութեան, երկու ազգերն կը թուին մի և
նոյն գաղափարով առաջնորդուած, իրենց
բնութեան վառարանը վերածել վայր կրօնա-
կան սրբոցեան։ Մեկարոնն և Հայտունն,

ունին շօշափելի նմանութիւններ իրարու
հետ։ Մեկարոնն եղած է արքայական դաշիճ
մը շքեղորէն զարդարուած սոկեճեղուն, քա-
ռակուսի ձեռով, տափարակ. փայտածածք
ձեղունը վեր բռնած են չորս սներ, ի մի-
ջին կրակարանի տեղը՝ որի վերայ կը բա-
ցուէր երդիկը օդ և լոյս առնելու և կրա-
կարանի ծուխն դուրս քշելու համար։ Ըստ
Հոմերոսի սա կազմում էր տան շինութեանց
մէջ պատուաւոր տեղը, դաշիճը, ուր հիւ-
րեր կ'ընդունուէին։ Հոմայեցիք աւելի
շքեղացուցած և քարեփոխած դայն, կոյէին
այգորելի, առջա, տաճար արքունի լիթէ
Հայաստանի Մեկարոնը, գիւղական տունն
յետ չորս հազար տարու նոյն անշքութեան
մէջ գտնուի, կամ ինչ որ Քանոփոն, Քրիս-
տոսէ Ե դար յառաջ տեսել և Հայ ազգի
հիւրասիրութիւնն վայելել ծիսոտած յար-
կի տակ, պատճառը իւր աշխարհագրական
դիրքն եղած է և կլիմայի բացառիկ սաստ-
կութիւնն։ Հայաստանի բնախօսութիւնը,
յայտնի է Հ. Ս. Սիւրանի գրած ճառէն, տա-
րին երկու վեցամեակի բաժանուած է, ա-
ռաշինը կը կազմեն դարուն, ամառն և
աշունը, երկրկու ամիս իւրաքանչիւրն,
իսկ մնացած վեց ամիսներ ձմեռ հաշուելու
է։ Այս ժողովուրդն երկու ծայրայեղութեան
խաղալիկ եղած, ստիպուեցաւ գետնափոր
տներու մէջ բնակիլ, որպէս զի ձմեռն ցուր-
տէն պատապարուի, ամառը՝ չոգէն. վառն
զի ձմեռը տաք է, ամառը զով։ Եւ պէտք
չէ զարմանալ այդ հնաւանդ (routine) ոճին
համար, քանզի նոյն խիստ ձմերուցը, բուքն
և որոնքը կը շարունակեն դեռ որոնք քսան
դար յառաջ սարսեցուցին Հռոմի լէգէոննե-
րը, և Սանատրուկի պէս շատ մը արքայա-
գուն իշխաններ թաղուեցան ձեռն թիփի
կամ հիւսի տակ առանց դայեակի մը կամ
սպիտակ շան օգնութեան՝ ազատելու մահէն։
Մեղաւոր պիտի լինէին Հայերն, եթէ ունե-
նային կամպանիայի կլիման կամ Նորվեգեան
անտառներն, և չքարեփոխէին նախալըհե-
ղեղեան տան ձեռն և բաժանունները։

Քարքարոսներն ևս հանգիստ չտուին եր-
կրին զարգանալու։

Բայց ամենայն ինչ այդ խեղճուկ վիճակի
մէջ Նախախնամական կ'երևի. վառն զի
պիտի գայ ժամանակն որ Հայ տունը, ինչ-
պէս ասինք, իւր տիպարուն խաբըթաց լինի
գմբէթաւոր շինութեանց՝ Նախապատմական
Հայ գիւղացու տունն շատ աւելի խեղճով
և մտածութեամբ շինուած է, և աւելի ա-
ռողջապահիկ քան Ասորա-Քարեկական և
Հռոմի վեհապետներու տներն՝ որոնք զանեմ
լոյս կ'առնէին. օրինակի համար Լիւիայի

1. Ողիական Լ. տ. 110, Թարս. Հ. Ա. Գ. 1.

տունը Պալատին լերան վրայ: Վերեւ ասացինք որ կլիմայի անողորմ ցրտութեան համար, քարայրէն անցեր են գետնափոր տնէլու, և ժամանակի ճարտարապետն երջանիկ գաղափար յղացեր է քառակուսի ձևի վերածել որչանան բնակարանը, երջանիկ գաղափար կոչեմք, վառ գի գեղեցիկն և օգտակարը ի միասին զուգեալ են: Գեղեցիկ են ուղղագիծ շինութիւնք, որուն հետեւ են Յունաստանի անզուգական ճարտարապետներն. օգտակարը, վառ գի՝ թող առողջապահական պլաններն, դիրքազոյն էր ծածքը բռնելու, այնու ճարտարութեամբ որ գմբեթադք բարձրանալով կ'ամփոփուէր կեդրոնի վերայ և կը բուրբէր երդիկն՝ ուսկից արեւն իւր դեղին շողերով սինառնէ կը դառնար տան չորս բուրնը, միանգամայն ծծելով տան խտացած մթնոլորտը, միշտ թարմ օդ մատակարարելով բնակիչներուն:

Հանձնարեղ և պարզ կերպով շինուած է Հայու տունը: Որմնադիրը կու գայ հետը առած անհրաժեշտ գործիքները. ծեփիչը, սուրանին և ուղղաձիգը, և օդի կշիռը: Եւ տան տիրոջ կամքին համեմատ՝ սոքով կը չափէ եկանոթիւնն և լույնութիւնն, պատի վրայ կը կանգնի և մէկ ու կէս մարգու հասակով բարձրութեամբ կ'աւարտէ պատերն. յետոյ կուգայ հիւսնի վարդեալը, իւր կազմածով, որ են՝ ուրազն և ոտնորազն, ձեռքի և բուրբիտուր սողցները, դուրը, թակը և քերիւն ծածքը բռնելու, որ յԱղամն հօրէ եկած է, բայց ըստ ճարտարութեան շինողին կը կրէ փոքր փոփոխութիւններ. կ'իմնականն քառակուսի անկիւններուց կը սկսի շարել կոնտերն զուգահեռական անկիւնագծին (diagonale), յետոյ կ'երկնցնէ քառակուսի որմերու երկարութեամբ երկու հաստ գերաններ, որ շէնքին մէջ տեղն բռնելով, ծանրութեան մեծ մասն անոնց վերայ կ'ինկնայ, ասոր համար տակը չորս հաստ անքր անհրաժեշտորէն կ'առնեն, ի բաց թողով առորմինքը: յետոյ դարձեալ անկիւններու ուղղութեամբ կոնտերն կը դրուին խաչաձև որոնք երթալով կը բարակոյնն և կ'ամփոփուին մինչև հասնին երդիկեմակն, ուր վարպետն երբեմն ճաշակով քառակուսին կլորակի կը վերածն աշաւծոյ փայտով: Վառ հասարակ գիւղացու՝ կայ լաւագոյնը, հարուստի կամ նախարարական տունը զոր դարպաս կը կոչեն. սա անշուշտ մնացորդ է նմանութիւն է իշխանական տներուն, արքունի տաճար կամ զահլիճ, որի դուռն բաց էր ժողովուրդի

առջև, թագաւորին կամ իշխանին ներկայանալու համար: Այս դարպաս առուածն ալ քառակուսի որմերու վերայ է շինուած, բայց կարի վարպետներն փոքր քառակուսիներով խորշ խորշ գործած բուրբի կը բարձրանայ և առակին հայեացքով գմբեթի մը տպաւորութիւնը կը թողու, կլորակ երդիկն ի միջին: Հայաստանի նախնական և զարգացած տներու մնացորդներ տեսնողն առաջին անգամ, դիտելով ուսումնասիրողի աջով, չէ մարթ չզարնուիլ բնածին մտածութեամբ թէ ի՞նչպէս և ի՞նչ ուղղութեամբ Հայ ճարտարապետն ինքնաբերաբար հասած է քառաչէն գմբեթի գաղափարին և մոծեր առաջին անգամ Հայ էկեղեցիների մէջ:

Եւ — Հին դարերու պատմութեան թեյն ձեռքէ շնորհած, կը տեսնենք որ նախնի զարգացած ժողովուրդներ իրենց զրական ոսկեզարն ողջուած ժամանակ, կակուղ մոմի վրայ արշաւող գրիչն (style) նոյն ճարտարութեամբ և նրութեամբ մարմարեան և կրանիքեայ քարերն մոմի պէս հարթելով կանգներ են կենայ ապարաններ, հոյակապ տաճարներ, հրաշալիքներ հանձնարոյ և գեղատուեստի: Երբ մի կողմէն Պերսիկէսի զարն անմահ մատենագիրներու գումարով յաշխարհ Հուսկուեցաւ, միւս կողմն Փիդիաս իւր դասովն՝ Ակրոպոլի վերայ յաւերժական կոթող կանգնեց Պարթենոնի տաճարն և ի միջի նստեցուց ամպրոպայինն Արամազդ. անոր բաց առաստաղէն լոյսը շուրջը կը փարէր և արեւն կենդանաբար ճառագայթով ցուրտ վէմը կը լերմացնէր: Երբ Օգոստոս գոռոզ կապիտոլիոնէն արիւնաներկ խաղաղութիւնն աւետեց աշխարհին, այն տունն չրկապատուած էր Հռոմի հանձնարներով. Վիրգիլիոս և Որատիոս անմահացուցին ազատութեան բռնաբարոյն, իսկ Մ. Ագրիպպա յաւերժական կանգնեց զազաքի մէջ առաջին գմբեթաւոր անմահից տաճարը կանգնեց:

Հանգոյն այս երկու մեծ ազգերուն, մեր փոքր ածու Հայաստանի մէջ իւր Ոսկեդարուն և զրբանախութեան հետ, զուգընթաց կը պայծառանայ նաև ճարտարապետութիւնն: Վաճառապուշ իւր խաղաղ թագաւորութեան ժամանակ, ինչպէս արքայազայել խնամքով հոգ տարաւ զբոց գիւտին, գեղեցիկ դպրութեան, նոյնպէս քաջարած է նաև գեղարուեստը, և այդ երանելի և երջանիկ ժամանակը, ինչպէս կը կոչէ Կորիւն, Հայ Քարազգործը, յետ կազմելու իւր գմբեթաւոր տաղաւարիկն, յետ ճոխացնելու իշխաւ

1. Արուստատուներն եկած էին անշուշտ Ասորիքէն կամ Փոքր Հայքէն, ուսկից Լուսկուս Հայ Քերական

Տիրանք բերաւ, որ եղաւ Հռոմի տառչին Գրաւմանան և Գրապետն, Եկիւրնի ամենալաւ բարեկամ.

նական դարպասն, և արքունի տաճարն, նորա առաջին մտածութիւնն եղած է աւելի չքեղ, փառաւոր և վեհապանծ պաշտամունքի տուն մը յօրինել երկնանման՝ իւր պաշտած Աստուծոյն, որ աստղերէն և արեւէն բարձր կը թափաւորէ յերկինս Տարակոյտ չկած որ այս յաջող զաղափարի ներշնչողն եղած են Հայաստանի երկու լուսաւորելիներն՝ Սահակ և Մեսրոբ, որոց գրչի արդիւնք ցարդ ընդունուած է ոսկեղինիկ գիրքն Ազաթանգեղոսի, յորում աստուածային տեսլեան պատմող կը Հանդիսանայ Ս. Գր. Լուսաւորիչ. « Եւ չորեցունց սեանցն ի վերայ իսալիցն կամարք զարմանատեսք ի միմեանս կապեցան, և ի վերայ այնորիկ տեսի գրմբեթաձև, խորանարդ, ամպեղէն շինուած աստուածակերտ զարմանալի՝ »: Հայկական գմբեթաւոր ճարտարապետութիւնն Գ- Ե դարուն, արդէն իրականութիւն է: Այս տեսիլքի ձևով և ոչ ուրիշ կերպ շինուած է Հայաստանի առաջին Հայրապետական Մայր Եկեղեցին: Փննադատութեան ասպարէզն բաց է ամենքի առջև, թող խօսի քաջագոյնը:

Եզրակացնելով մեր ցայս վայր գրածէն, պիտի ասենք որ Հայաստանի նախապատմական տներու լուսազոյն և զարգացած օրինակը կը տեսնուի Լալոնիոյ Տիրինոյ քաղաքի պեղումներու միջէն յայտնուած Միւսկարն կոչուած դահլիճը իւր վառարանով և լոյսանցոյց երդիկով: Արդ ակներև է որ Հայն և Յոյնն, իսկզբան իրանց քաղաքակրթութեան՝ ունեցած են մի և նոյն ձևի բնակարաններ: Հայն շնորհիւ իւր քառակուսի և կորնթարդ ձեղունով տան՝ յանգեր է իւր ՍԻՆՆԱԿԱՆ ԿԱՄԱՐԱՊԱՍԱԿ ՓԱՐԱՇԷՆ ԳՄԲԵԹԻՆ. իսկ Յոյնն Միկարոնի տափարակ ծածքով՝ տուեր է աշխարհի իւր ՈՍԿԵՁԵՂՈՒՆ ՓԱՅՏԱԾԱՅԲ ԲԱԶԻԼԻԿԱՆ:

(Շարունակելի) 2. ԳՈՐՈՒՅԼ ՆԱԱՊՈՍՏՈՒՆ

1. Ա. Էջ 552. Կ. Վահագնի, 1835:

Գ Բ Ա Կ Ա Ն

ՍՈՓՈԿԼԵՍ

Ի Դ Ի Պ Ո Ս Թ Ա Գ Ա Ի Ո Ր

(Շար. տես Բազմ. 1927, էջ 251)

ԵՐԻՐՈՐԻ ԱՐԱՐՈՒԱԾ

ԿՐԷՈՆ, ՊԱՐ, ԻԴԻՊՈՍ, ՅՈԿԱՍՏԷ

ԿՐԷՈՆ

Քաղաքացիք, իմանալով որ արքայն իդիպոս զիս ամբաստանել է զԺնէ՛ Զրպարտութեամբ, կու գամ սատարիկ զայրացած: Զի եթէ իր արգիւններուն մէջ արդի կը համարի թէ ես իրեն ֆուսակար եղած ըլլամ՝ ըլլայ խօսքով թէ գործով, Ամբաստանող այդ խօսքերուն բեռան տակ Զի կրնար կեանքն հանդուրժելի ըլլալ ինձ: Խնդիրն անանկ թեթեւ. ֆուսի վըրայ չէ, Պիտո մեծ աղէտը պիտի լլար ինձ համար, Քաղաքիս մէջ կոչուիլ մասնիչ ապիրատ, Կոչուիլ մասնիչ սիրելեացմէ եւ քենէ:

ՊԱՐ

Այդ կշտամբանքն ըլլայ թերեւս արդիւնք Սրտմըտութեան՝ քուն թէ մաքի համոզման:

ԿՐԷՈՆ

Բայց ինչ բանով յայտնի եղաւ որ գուշակն իմ խորհրդով ըսած ըլլայ սուտ բաներ:

ՊԱՐ

Բնան տոնք, Բայց չեմ գիտեր ինչ մտքով:

ԿՐԷՈՆ

Այդ մուրն ուղիղ աչքով՝ մտքով վրաս քըսեց:

ՊԱՐ

Ես ինչ գիտեամ. չեմ տեսներ ինչ որ կ'ընեն իշխաններն. ան ահա կ'ելլէ պալատէն:

ԻԴԻՊՈՍ

Գո՛ւն ես, եւ ինչպէս եկար, ինչ երեսով ելիր եկեր ես միշտ եւ իմ յարկիս տակ. Կեանքիս յայտնի դաւանանողը, պետութեան Յայտ համարձակ աւագանողը. օ՛ն ըսէ, Աստուածներուն առունով, ինչ վատութիւն

